# Կ Ա Ր Ծ Ի Ք

## ԳԱՌՆԻԿ ԱԾՈՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀՀ ՆՅՈՒԹԵՐՈՎ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

### *Ատենախոսության թեմայի արդիականությունը*

Հազարամյակներ շարունակ մարդկային միտքը փնտրել ու փորձել է գտնել հասարակական կյանքի կազմակերպման այնպիսի ձևեր ու սկզբունքներ, որոնց կիրառումը հնարավորություն կտար ստեղծել ներդաշնակ, հակասություններից ու ճգնաժամերից զերծ, բոլորի համար ընդունելի և բոլորի շահերը պաշտպանելուն միտված հասարակություն: Նույնիսկ երրորդ հազարամյակում այդ խնդիրը դեռևս իր վերջնական լուծումը չի գտել:

ՀՀ անկախացումը և քաղաքական կառավարման համակարգում ժողովրդավարական արժեքների որդեգրումը նորանոր խնդիրներ դրեցին պետության առջև: Նորանկախ պետության առջև ծառացած հիմնական խնդիրներից առավել կարևորներն էին հասարակության ինքնակազմակերպման, նոր որակի փոխհարաբերությունների և դրանց գործունեությունն ապահովող հանրային կառավարման համակարգի ձևավորումը: Այս ամենի կյանքի կոչման համար, հարկավոր էր երկրում գոյություն ունեցող արժեքային չափորոշիչների վերանայում, ժողովրդավարական արժեքների տարածում և կիրառում, ինչպես նաև պետական կառավարման համակարգում արդյունավետ մեխանիզմների հիմնում: Հետզհետե փոփոխվող աշխարհն իր հետ բերեց նոր մարտահրավերներ, որոնցից

կարևորագույններից է գլոբալացումը, տնտեսության միջազգայնացումը: Տնտեսական գլոբալացումը դարձավ միջազգային, ինչպես նաև պետության տնտեսության խոցելիության պատճառներից մեկը: Պետությունների տնտեսական ինքնիշխանության իրացման խնդիրն ավելի ակներև է այսօր գլոբալիզացիոն գործընթացների համատեքստում, որի մաս է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Գլոբալացման, տնտեսության միջազգայնացման և ինքնիշխանության վերլուծությունների մեծ մասը կատարվում է պատմական, իրավագիտական, սոցիալ-քաղաքական մոտեցումներով, տնտեսագիտական տեսանկյունը հաճախ անտեսվում է: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ այս ոլորտի վրա մեծ ազդեցություն ունեցել և շարունակում են ունենալ տնտեսական գործոնները: Հենց այս համատեքստում տնտեսական ինքնիշխանության կառավարման ոլորտում առաջ եկող խնդիրների լուծումն արդիական է և հրատապ:

### *Ատենախոսության նպատակը և հիմնական բովանդակությունը*

Ատենախոսության նպառակն է ՀՀ-ում տնտեսական ինքնիշխանության վրա ազդող հիմնական գործոնների գնահատումը և տնտեսական ինքնիշխանության մակարդակի բարձրացման ուղիների առաջ քաշումը:

Ատենախոսության հիմնական նպատակին համապատասխան ատենախոսը կարևորել է անհապաղ լուծումներ պահանջող հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել «տնտեսական ինքնիշխանության» հասկացության՝ գիտական գրականության շրջանակներում ներկայացված տեսություններն ու մոտեցումները, ինչպես նաև տնտեսական ինքնիշխանության վրա ազդող հիմնական գործոնները,
- սահմանել և հետազոտել ՀՀ տնտեսական ինքնիշխանության վրա ազդող հիմնական գործոնները,

- վերլուծել ՀՀ տնտեսական ինքնիշխանության անբարենպաստ գործոններն ու դրանց պաշտպանությանն բարձրացմանն ուղղված լուծումներ,
- ներկայացնել ՀՀ տնտեսական ինքնիշխանության պաշտպանությանն ու դրա մակարդակի բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության նպատակի և մեծամասամբ վերը թվարկված խնդիրների շրջանակով էլ պայմանավորված է ատենախոսության կառուցվածքը: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություն մասից, օգտագործված գրականության ցանկից: Վերջում ներկայացված են նաև հավելվածները:

Ներածության մասում (էջ 3-7) հեղինակը հիմնավորել է ատենախոսության թեմայի արդիականությունը, բնութագրել է հետազոտության նպատակը, խնդիրները, նորույթը, մեթոդաբանությունը, կառուցվածքը:

Առաջին՝ «Տնտեսական ինքնիշխանությունը՝ որպես կայուն տնտեսական զարգացման կարևոր գործոն» գլխում (էջ 8-62) Գ.Գևորգյանը տեսական և անհրաժեշտ մակարդակով վերլուծության է ենթարկել տնտեսական ինքնիշխանության էությունը և հիմնական ասպեկտները, և դրանց վերափոխումները ժամանակակից պայմաններում: Այնուհետև մանրամասնորեն քննարկել է բաց տնտեսությունը, ինտեգրացիոն ու գլոբալիզացիոն գործընթացները, ինչպես նաև առանձնացրել է տնտեսական ինքնիշխանության չափանիշներն ու գնահատման մեթոդաբանությունը:

Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսական ինքնիշխանության կառավարչատնտեսական հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները ՀՀ-ում» գլխում (էջ 63-113) հեղինակը խորը վերլուծության է ենթարկել ՀՀ-ում տնտեսական ինքնիշխանության սոցիալ-տնտեսական նախադրյալները, դասակարգել ու համեմատական վերլուծությամբ ներկայացրել տնտեսական ինքնիշխանության ներքին ու արտաքին սպառնալիքները: Քննարկել է վերպետական ինտեգրացիոն մարմիններում ՀՀ անդամակցության ռիսկերն ու մարտահրավերները:

Երրորդ՝ «ՀՀ տնտնտեսական ինքնիշխանության մակարդակի կարգավորման կառավարչական մեթոդների կատարելագործման և տնտեսական ինքնիշխանության

ամրապնդման հիմնական գերակայությունները» գլխում (էջ 114-147), ուշադրությունը կենտրոնացրել է տնտեսական ինքնիշխանության գնահատման գործակիցների դուրսբերման և արտաքի տնտեսական հարաբերությունների դիվերսիֆիկացման վրա:

Հետազոտության վերջում (էջ 148-153), հեղինակը հանգել է համապատասխան եզրահանգումների և կատարել դրանցից բխող առաջարկություններ:

## *Ատենախոսության գիտական նորույթը և տեսական, մեթոդական ու գործնական նշանակությունը*

Ատենախոսության արժանիքներից կարելի է նշել այն, որ մշակվել է տնտեսական ինքնիշխանության գնահատման և կառավարելիության գործակիցների հաշվարկման մեթոդաբանություն՝ համապատասխան ցուցանիշների համակարգի հիման վրա: Ինչպես նաև մշակված տնտեսական ինքնիշխանության կառավարելիության գործակցի հիման վրա առաջ է քաշվել տնտեսական ինքնիշխանության աստիճանի գնահատման հարաբերական՝ ՏԻԳ գործակցի հաշվարկման մոդելը:

Բացի այդ, հեղինակի կողմից առաջարկվել է «ՀՀ տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հայեցակարգի» ընդունում բավական մանրամասն նկարագրված գործողություններով, առաջարկվող ստեղծվող մարմնի կազմակերպական կառուցվածքով և գործառույթներով, որը հնարավորություն է տալիս ներդաշնակորեն համադրել պետական կարգավորման և ինքնիշխանության քաղաքականության մշակման և վերահսկման միջոցները՝ նպաստելով ոլորտի կայացմանը:

Հետազոտության ընթացքում ատենախոսը ձեռք է բերել տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ: Ինչ վերաբերում է դրանց գիտական նորույթին, ապա պետք է նշել, որ դրանց մեծ մասը գիտական կարևոր նորույթ են պարունակում: Հեղինակին հաջողվել է դրանք բացահայտել, հիմնավորել և, որ շատ կարևոր է, տալ գիտական նորույթ կրող գործուն առաջարկություններ:

Ընդհանուր առմամբ ատենախոսությունը բնութագրվում է հստակությամբ և նպատակասլացությամբ: Հեղինակի կողմից ստացված հիմնական արդյունքներն ունեն նաև կիրառական կարևոր նշանակություն: Կատարված վերլուծություններն ու հետևությունները հիմնված են քննարկվող խնդիրներին առնչվող տարաբնույթ նյութերի և ուսումնասիրությունների արդյունքների վրա: Ատենախոսությունում օգտագործված են հետազոտվող հիմնահարցերին վերաբերող հայրենական և արտասահմանյան երկրների հրապարակումները, հղումների միջոցով նշված են դրանց հեղինակներն ու սկզբնաղբյուրները: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործվել են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող գործնական տվյալներ, օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, ինչը հեղինակին հնարավորություն է ընձեռել ապահովել աշխատանքում ստացված ադյունքների հիմնավորվածությունը:

### *Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ*

Թվարկված առավելությունների հետ մեկտեղ ատենախոսի աշխատանքը զերծ չէ առանձին թերացումներից և բացթողումներից: Դրանցից առանձնացնենք հետևյալները.

1. Ատենախոսի կողմից Ներածության հատվածում առանձնացված են 4 հիմնական խնդիրներ, սակայն Բովանդակությունում քննարկման ենթակա հարցադրումների թիվն ավելի է: Հետևապես Ներածությունում Բովանդակության հարցադրումներից պակաս թվով խնդիրներ ձևակերպելը ոչ լիարժեք է դարձնում այն: Կարծում ենք՝ Ներածությունում Բովանդակությանը համահունչ խնդիրների հստակ թվարկումն այս հատվածը կդարձներ առավել ամբողջական:
2. Ատենախոսի կողմից առաջարկվող 1-ին նորույթը՝ «տնտեսական ինքնիշխանության» նոր սահմանումը ներքին և արտաքին բաղադրիչների

բաժանման հիման վրա կարևոր առաջարկ է, սակայն գիտական նորույթի տարրը թույլ է արտահայտված:

3. Ատենախոսության 2.1՝ «ՀՀ տնտեսական ինքնիշխանության սոցիալ-տնտեսական նախադրյալների քանակական գնահատում» ենթագլուխում վերլուծության է ենթարկվել ՀՀ մակրոտնտեսական մի շարք ցուցանիշներ և գործոններ որոշակի ժամանակահատվածի համար: Աշխատանքն առավել կշահեր, եթե զուտ գործոնների վերլուծությունից անցում կատարվեր դրանց միջև կուռ և կայուն կապի ձևավորման հիմնավորմանը, ինչ-որ տեղ էլ նաև կորելացիոն կապերի վերլուծությանը:
4. Ատենախոսության 2.3՝ «Տնտեսական ինքնիշխանության հիմնախնդիրները ՀՀ-ում՝ վերպետական ինտեգրացիոն միավորումների անդամակցության պայմաններում» ենթագլխում քննարկման հիմնական առարկան է դարձել «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիրը, որի առանձին հոդվածներ, դրույթներ բավական մանրամասն քննարկվում և վերլուծության են ենթարկվում: Կարծում ենք՝ աշխատանքն առավել կշահեր, եթե վերլուծությունների մի զգալի հատված էլ հատկացվեր պայմանագրի դրույթների կատարման արդյունքների և հետևանքների հիման վրա տնտեսական ինքնիշխանության սահմանափակումների, մարտահրավերների և/կամ ռիսկերի գնահատմանը:

## *Եզրակացություն*

Հետազոտության ընթացքում հեղինակի կողմից ստացված հիմնական արդյունքներն ունեն նաև կիրառական կարևոր նշանակություն: Գ.Գևորգյանի ատենախոսությունն ավարտուն, ամփոփ և գիտական պատշաճ մակարդակով կատարված հետազոտություն է:

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքն ու հետազոտության ընթացքում ստացված արդյունքների նշանակությունը և բացասական ազդեցություն չեն թողնում հետազոտության ընդհանուր գնահատականի վրա:

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, որում առաջադրված և լուծված են տնտեսական ինքնիշխանության կառավարման կարևոր և արդիական խնդիրները:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Գառնիկ Աշոտի Գևորգյանի **«Պետության տնտեսական ինքնիշխանության կառավարչական հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս
Տնտեսագիտության թեկնածու, դեցենտ Ս.Ա.Ասատրյանց

Տնտեսագիտության թեկնածու, դեցենտ
Ս.Ա.Ասատրյանցի ստորագրության
իսկությունը հաստատում եմ ՀԱՊՀ
գիտական քարտուղար, տ.գ.թ. դոցենտ Ծ.Ս.Հովհաննիսյան

02 05 2023թ.